ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 88

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի պահանջով

ՈՐՈՇՈՒՄ ԵՆՔ՝

2018 թվականի հունիսի 4-ին գումարել Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով

1. Կոտայքի մարզի Սոլակ համայնքում Մարտին Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի ցանկապատի վերանորոգման համար գումար հատկացնելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. 30 ՄԱՅԻՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
30 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 89

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 22 կետերի 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով ու հիմք ընդունելով Արշալույս Սերյոժայի Մխիթարյանի, իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 2-րդ թաղամաս 76 հասցեի հողամասում 2008 թվականին ինքնակամ կառուցված S=105,52քմ շինության օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի, <Պիռամիդա>>ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի, ինքնակամ կառույցի պահպանումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արշալույս Մխիթարյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 2-րդ թաղամաս 76 հասցեի հողամասում 2008 թվականին ինքնակամ կառուցված S=105,52քմ մակերեսով բնակելի տունը համարել օրինական:

2. Հաշվի առնելով, որ S=105,52քմ մակերեսով բնակելի տունը ինքնակամ կառուցվել է 2008 թվականին, ապա նրա օրինականացման համար համայնքի բյուջե վճարել 116072 ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար վճարների 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 07-060-0510-0002 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել 2-րդ թաղամաս 76 տուն հասցեն:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. 30 ՄԱՅԻՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
31 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 90

ՌՈՒՍՏԱՄ ԼՅՈՎԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018թ հունվարի 19-ի թիվ 9-Ն որոշումը և 2018թ. մայիսի 18-ի թիվ 26 և 2018 թ. մայիսի 30 թիվ 28 նիստի աճուրդի արդյունքները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սոլակ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական այլ հողատեսք 1,0 հա, վկայական թիվ 25122017-07-0029, կադաստրային ծածկագիրը 07-060-0509-0024 աճուրդ վաճառքով, սեփականության իրավունքով հատկացնել Ռուստամ Լյովայի Խարատրյանին 117500 ՀՀ դրամ շահած արժեքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. 31 ՄԱՅԻՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 91

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով նրանց դիմումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Սոլակ համայնքի բյուջեի «Բնակչության օգնություն տալու մասին» 4729 հոդվածից հատկացնել 90 000 / ինսուն հազար/ դրամ գումար յուրաքանչյուրին հետևյալ չափով

1. Փառանձեմ Գյուրջյան - 20 000 դրամ
2. Թամարա Շախնազարյան - 20 000 դրամ
3. Ալինա Երեմյան - 20 000 դրամ
4. Եվա Գևորգյան - 30 000 դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. 01 ՀՈՒՆԻՍԻ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սոլակ, 098171186, solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
01 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 92

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ 83 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Կոտայքի մարզի Սոլակ համայնքի ղեկավարի 2018թ մայիսի 15-ի <<Կոտայքի մարզի Սոլակ համայնքի 2018 թվական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին>> թիվ 83 որոշման մեջ <<և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1 կետի» բառերը հանել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. 01 ՀՈՒՆԻՍ
գ.Սոլակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սոլակ համայնք
ՀՀ. Կոտայքի մարզ. գ.Սոլակ. 098171186. solak.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 93

ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՒՆԱՆՅԱՅԱՆԻ, ԷԴԳԱՐ ՀՈՒՆԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով Անդրանիկ Հունանյանին և Էդգար Հունանյանին հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակներով օգտագործելու համար, չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Անդրանիկ Հունանյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ճանաչել Անդրանիկ Հունանյանի և Էդգար Հունանյանի սեփականության իրավունքը Սոլակ համայնքի 1-ին փողոց 3/1 հասցեում գտնվող, ըստ կադաստրային քարտեզագրման փաստացի օգտագործվող 0,12 հեկտար հողամասի նկատմամբ համաձայն <<Պիռամիդա>> ՍՊԸ -ի հատակագծի, որը նրանց կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանումում:

3. Անվավեր ճանաչել Սոլակ համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 29-ի թիվ 86 որոշումը:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԱԴԱԼ ՍԱՐԳՍՅԱՆ

2018 թ. 05 ՀՈՒՆԻՍԻ
գ.Սոլակ